ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-1

ք. Երևան «15» «05» 2024 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԹՈՐԳ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Թ.Սհոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հանբարձումյան 7 և 9 շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու

դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու,

ոդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է

www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում

կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 19776000 (տասնինը միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ

հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԹՈՐԳ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ՀՀ ֆինանսների նախարարության	գ. Լանջաղբյուր Մաշտոցի փ. 6
գործառնական վարչություն	Ակբա Բանկ ԲԲԸ
ՀՀ 900032313174	Հ/Հ 220083336135000
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 08418358
Վ.Պապիկյան ----------	Թ.Սիոյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«15» « 05 » 2024 թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում, ընդ որում՝	Տեխնիկական բնութագիր	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Կատարման ժամկետ է համարվում սույն աշխատանքների պայմանագիրը և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման համար սահմանվում է նշված օրը ներառյալ
1	45611300/84	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հանբարձումյան 7 և 9 շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	Գնման առարկա է հանդիսանում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի շենքերի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները Աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքների ծավալաթերթով նախատեսված ծավալներին և ձևին համապատասխան: 1. Ընթացակարգին մասնակից կազմակերպությունը գնի առաջարկը սահմանելու նպատակով իրավունք ունի նախորոք այցելելու շին հրապարակ: 2. Վերանորոգման աշխատանքները պետք է սկսվեն պայմանագրի հաստատման պահից 2/ երկու / աշխատանքային օրվա ընթացքում: 3. Աշխատանքները իրականացնող բանվորները պետք է ունենան համապատասխան աշխատանքային փորձ, իսկ աշխատանքները իրականացնելու ժամանակ պետք է կրեն հատուկ աշխատանքային վերնազգեստ, պահպանելով անվտանգության կանոնները: Շին հրապարակը պետք է առանձնացվի հատուկ պարսպով. 4. Աշխատանքները կատարել երեք փուլերով՝ ա/ առաջին փուլում կատարել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 50 օրացուցային օրում պայմանագրային ամբողջ ծավալի առնվազն 30%-ը բ/ երկրորդ փուլում կատարել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 100 օրացուցային օրում պայմանագրային ամբողջ ծավալի առնվազն 80%-ը գ/ երրորդ ավարտական փուլում միջև պայմանագրի վերջնաժամկետը կատարել մնացած աշխատանքները 100%-ով:	19776000	130 օրացուցային օր

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

1-ին չափաբաժին

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հանբարձումյան 7 և 9 շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների

NN	հիմնավ.	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6	7
		Շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	Р25-18 К=0,6 К=0,7 կիրառ	Մետաղական ավտոտնակների ապամոնտաժում 2հատ	տն	3.000	64.675	194.03
2	27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում 150x300մմ, բետոնե հիմքով	գմ	122.000	1.335	162.91
3	Е46-79	Գոյություն ունեցող պատի քանդում	մ3	0.930	17.274	16.06
4	Р9-26 կիրառ	Փայտե բազրիքի ապամոնտաժում	գմ	18.300	0.708	12.96
5	Е46-99	Բետոնե հատակի քանդում 35մ2	մ3	3.500	22.553	78.93
6	Е27-33	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 851մ2	մ3	42.550	5.404	229.94
7	Е27-31	Խճի շերտի քանդում 851մ2	մ3	85.100	0.674	57.38
8	Р9-26	Մետաղական բազրիքի ապամոնտաժում Н=900մմ	գմ	97.200	0.708	68.84
9	Е46-99	Գույություն ունեցող աստիճանների քանդում	մ3	10.000	22.553	225.53
10	7-668 К=0,6 կիրառ	Նստարանների ապամոնտաժում	հատ	3.000	1.363	4.09
11	7-668 К=0,6 կիրառ	Աղբամանների ապամոնտաժում	հատ	1.000	1.363	1.36
12	Е1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	3.150	3.338	10.52
13	Е1-968	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ3	3.150	1.396	4.40
14	С310-13 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ /այդ թվում տեղում առկա շին աղբ-6.3մ3/	տն	285.727	4.540	1297.13
		Ընդամենը	10.82	%		**2364.08**
		Բարեկարգման աշխատանքներ				
15	8-11	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	1.150	9.501	10.93
16	27-87	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x200մմ	գմ	115.000	6.503	747.85
17	8-11	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	2.820	9.501	26.79
18	27-86	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 150x300մմ	գմ	141.000	12.899	1818.83
19	Е27-173 Е27-174	Խճի շերտի պատրաստում 10սմ հաստությամբ	մ2	740.000	1.550	1147.25

20	E27-169 E27-172	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ2	740.000	5.330	3944.13
21	E1-1592	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ3	6.800	2.837	19.29
22	C310-35	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	8.160	7.391	60.31
23	E48-168	Բուսահողի փռում ձեռքով	մ2	68.00	0.555	37.77
24	E48-214	Սերմի ցանում	մ2	68.00	0.221	15.00
25	11-6	Խճի շերտի պատրաստում 10սմ հաստությամբ (լցնովի ռետինե հատակի տակ)	մ3	7.950	16.739	133.07
26	E6-16	Միաձույլ ե/բ հատակի պատրաստում B-15 դասի բետոնից (լցնովի ռետինե հատակի տակ)	մ3	7.950	51.011	405.53
27	Շուկա	Ամրանի արժեքը 10մմ A500c դասի	տն	0.795	441.419	350.93
28	E11-201 կիրառ	Լցնովի ռետինե հատակի իրականացում 1.5սմ հաստությամբ (ռեզինե փշրանքներ)	մ2	79.500	29.867	2374.39
29	11-6	Խճի շերտի պատրաստում 10սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	մ3	7.100	16.739	118.84
30	E23-1	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ	մ3	3.550	15.833	56.21
31	27-175	Բետոնե դեկորատիվ սալիկների տեղադրում (старый город)	մ2	71.00	10.156	721.04
32	8-11	Խճի շերտի պատրաստում	մ3	0.500	9.501	4.75
33	E6-19	Միաձույլ ե/բետոնե աստիճանների պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0.630	58.356	36.76
34	Շուկա	Ամրանի արժեքը 10մմ A500c դասի	տն	0.027	441.419	12.05
35	E15-77	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ2	4.200	22.927	96.29
36	8-11	Խճի շերտի պատրաստում	մ3	1.000	9.501	9.50
37	E6-16	Միաձույլ ե/բ թեքահարթակի պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0.750	51.011	38.26
38	Շուկա	Ամրանի արժեքը 10մմ A500c դասի	տն	0.047	441.419	20.75
39	E11-221	Թեքահարթակի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ2	6.500	15.386	100.01
40	7-668 կիրառ	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	7.000	11.335	79.35
41	7-668 կիրառ	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	3.000	7.554	22.66
42	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	83.533	83.53
43	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	71.839	71.84

44	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	46.817	46.82
45	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	53.158	53.16
46	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	56.195	56.20
47	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	53.158	53.16
48	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	62.270	62.27
49	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	42.526	42.53
50	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	41.007	41.01
		Ընդամենը	59.11	%		**12919.06**
		Էլեկտրալուսավորություն /2հատ/				
51	E1-966	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	1.600	11.168	17.87
52	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ3	0.025	1.396	0.03
53	E6-1	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	0.016	40.184	0.64
54	E6-5	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0.600	69.397	41.64
55	Շուկա	Ամրանի արժեքը 10մմ A500c դասի	տն	0.008	441.419	3.53
56	E6-82	Պողպատե պատյանի տեղադրում 133x4մմ խողովակներից	տն	0.018	129.956	2.29
57	Շուկա	133x4մմ պողպատե խողովակի արժեքը	գմ	1.400	7.489	10.49
58	E6-83	Պողպատե թիթեղի տեղադրում 8մմ	տն	0.005	1272.513	6.36
59	33-621	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	2.000	15.429	30.86
60	Շուկա	108x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	10.400	5.577	58.00
61	Շուկա	42x3մմ մետաղական խողովակի	գմ	5.600	2.295	12.85

		արժեքը				
62	15-614	Մետաղական մասերի 2 շերտ ներկում	մ2	4.265	1.658	7.07
63	8-594-1	Լուսադիոդային լամպ 50Վտ 7433լմ 6000L IP65	հատ	4	15.557	62.23
64	Շուկա	Տուփ ճյուղավորիչ 150x150	հատ	2.000	2.207	4.41
65	8-525-1	Ավտոմատ անջատիչ երկբևեռ 10Ա	հատ	2	4.829	9.66
66	8-141-1	Մալուխի անցկացում ալյումինե ԱԲԲԳ - 4x16մմ2	գմ	100.000	0.997	99.66
67	8-141-1	Մալուխի անցկացում ալյումինե ԱԲԲԳ - 4x10մմ2	գմ	60.000	0.711	42.68
68	8-141-1	Մալուխի անցկացում ալյումինե ԱԲԲԳ - 3x3.2մմ2	գմ	37.000	0.501	18.55
69	8-417-11	Խողովակ պոլիէթիլենային Φ 50	գմ	52.000	0.977	50.82
70	8-417-10	Ճկախողովակ պոլիէթիլենային Φ 32	գմ	6.000	0.675	4.05
71	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	10.250	3.338	34.22
72	E23-1	Ավազե նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	2.950	5.938	17.52
73	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ3	7.300	1.396	10.19
74	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	5.458	4.540	24.78
75	8-156-5	Մալուխի չոր հարդարում	հատ	4.000	1.214	4.86
		Ընդամենը	2.63	%		**575.26**
		Մետաղական բազրիք H=0,94մ 120գմ				
76	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	6.452	6.222	40.14
77	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ3	2.839	1.396	3.96
78	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	6.865	4.540	31.16
79	8-11	Խճի շերտի պատրաստում	մ3	2.581	9.501	24.52
80	E6-2	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-12,5 դասի բետոնից	մ3	1.032	62.476	64.49
81	E6-82	Թերթապողպատի տեղադրում	տն	0.1519	1020.969	155.12
82	E7-735	Մետաղական բազրիքի պատրաստում և տեղադրում մետաղական էլեմենտներից	գմ	120.000	3.623	434.78
83	Շուկա	60x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	83.87	1.574	132.05
84	Շուկա	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	116.13	1.265	146.95
85	Շուկա	40x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	365.16	0.956	349.24
86	15-614	Մետաղական մասերի 2 շերտ ներկում	մ2	79.174	1.658	131.29
		Ընդամենը	6.93	%		**1513.70**
		Ոռոգում				
87	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	22.080	3.338	73.71
88	E23-1	Ավազե նախապատրաստական շերտ պատրաստում H=10սմ	մ3	3.680	5.938	21.85
89	E1-968	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում խողովակաշարի վրա H=10սմ	մ3	3.680	4.633	17.05
90	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ3	14.720	1.396	20.55

91	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	13.616	4.540	61.81
92	E22-117	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ25մմ, փորձարկումով	գմ	92.000	0.605	55.63
93	E22-64	Խողովակի պատյանի տեղադրում Φ51x2.5մմ	գմ	15.300	2.254	34.49
94	22-144	Խողովակների ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում Φ50մմ	գմ	15.300	1.146	17.53
95	Շուկա	Պոլիէթիլենային ձևավոր մասեր	հատ	38.000	0.515	19.57
96	E16-185	Ջրցան սպրինկլերային ցնցուղներ 25մմ	հատ	18.000	5.763	103.74
97	E16-185	Ջրցան սպրինկլերային ցնցուղներ փոքր 25մմ	հատ	8.000	3.851	30.81
98	22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	1.000	3.349	3.35
		Ընդամենը	2.11	%		**460.10**
		Ընդամենը				
		Սարքավորումներ	18.415	%		
1	7-668 կիրառ	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	7.000	45.000	315.00
2	7-668 կիրառ	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	3.000	23.000	69.00
3	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	486.009	486.01
4	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	417.968	417.97
5	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	272.386	272.39
6	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	309.278	309.28
7	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	326.951	326.95
8	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	309.278	309.28

9	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	362.297	362.30
10	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	247.423	247.42
11	7-668 կիրառ	Մարզասարքերի տեղադրում ամրացումով (մարզասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	238.586	238.59
		Ընդամենը				3354.18
		ԱԱՀ	20%			21186.37
		Ընդամենը				4237.27
						25423.64

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԹՈՐԳ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր Մաշտոցի փ. 6
Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220083336135000
ՀՎՀՀ 08418358

Թ.Սհոյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1.1
ԵՔ-ԲՄԱԾՁԲ-24/25-1 **ծածկագրով**
բաց մրցույթի հրավերի

ՀԱՎԱՍՏՈՒՄ
հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

«ԹՈՐԳ» ՍՊԸ-ն հավաստում է, որ **ԵՔ-ԲՄԱԾՁԲ-24/25** ծածկագրով բաց մրցույթի շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԹՈՐԳ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր Մաշտոցի փ. 6
Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220083336135000
ՀՎՀՀ 08418358

Թ.Սիրոյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

«15» «05» 2024 թ. Հավելված թիվ 2
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՆԲԱՐՁՈՒՄՅԱՆ 7 ԵՎ 9 ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N Ը/Կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հանբարձումյան 7 և 9 շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	Մինչև 130 օրացուցային օրը ներառյալ
ԸՆԴԱՄԵՆԸ		Z	Z

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԹՈՐԳ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր Մաշտոցի փ. 6
Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ 2200833361350000
ՀՎՀՀ 08418358

Թ.Սհոյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 3
«15» « 05 » 2024 թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/84	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հանբարձումյան 7 և 9 շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	-----	-----	-----	-----	9888000	9888000	19776000	19776000	19776000	19776000	19776000	19776000	19776000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
Ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԹՈՐԳ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր Մաշտոցի փ. 6
Ակբա Բանկ ԲԲԸ
Հ/Հ 220083336135000
ՀՎՀՀ 08418358

Թ.Սիոյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____ .
_____ .
գտնվելու վայրը _____ –
հհ _____ -
հվհհ _____ -

Պատվիրատու

_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

	Կատարված աշխատանքների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
“ ” 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

acba

08 մայիսի 2024թ.

Թիվ 008-126

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 23 08 40 668126/11

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԹՈՐԳ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-1» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 3.813.550 (երեք միլիոն ութ հարյուր տասներեք հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 20/09/2024թ.-ին հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 17 փետրվարի 2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-1» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա

ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Գեղարքունիք» մասնաճյուղի կառավարիչ Ա. Առաքելյան

Կատարող՝
Գայանե Սահակյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8259)

acba

08 մայիսի 2024թ.

Թիվ008-125

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 23 08 40 668126/10

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԹՈՐԳ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-1» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 2.543.000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 20/09/2025թ.-ին հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 17 փետրվարի 2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-1» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Գեղարքունիք» մասնաճյուղի կառավարիչ Ա. Առաքելյան

Կատարող՝
Գայանե Սահակյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8259)